ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1957 Общественные науки

Ա. Ցուխտ

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ 18-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ

Ռուսաստանի հայկական գաղութները, լինելով հայ-ռուսական դարավոր կապերի արտահայտություններից մեկը, կարևոր դեր են խաղացել այդ կապերի զարգացման և ամրապնդման, հայ և ռուս ժողովուրդների փոխադարձ շփման և մերձեցման մեջ։

Ռուսահայ գաղութների 17—18-րդ դարի պատմությունը մինչև այժմ մնում է հայ-ռուսական հարաբերությունների ամենից ավելի քիչ ուսումնասիրված հարցերից մեկը։ Մինչդեռ այդ գաղութների գործունեության բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի ավելի լրիվ ՝վեր հանել նշված ժամանակաշրջանի հայ-ռուսական տնտեսական, քաղաքական և կուլտուրական հարաբերությունները։

Ռուսահայ գաղութները ստեղծվել են տարբեր ժամանակներում, նրանք տարբերվում էին միմյանցից աղդաբնակչության թվով, տարբեր սոցիալական խմբերի տեսակարար կշռով, բնակիչների գործունեության և կրաղմունքի բնույթով։ Այդ գաղութները միանգամյան տարբեր դեր էին կատարում այն քաղաքների տնտեսական կյանքում, ուր գտնվում էին։

Վերոհիշյալ հանգամանքները անհրաժեշտ են դարձնում յուրաքանչյուր գաղութի պատմությունը առանձին ուսումնասիրել։ Միայն այս դեպքում հնարավոր կլինի ինչպես հարկն է քննել ռուսահայ գաղութների ներքին զարգացումը և որոշել նրանց հատուկ՝ թե ընդհանուր, և թե ուրույն գծերը։

Սույն հոդվածում քննվում են ռուսահայ գաղութների մեջ ամենախոշորներից մեկի՝ Աստրախանի հայկական գաղութի զարգացման մի քանի հարցեր։

* * *

Ռուս-Արևելյան առևտրի կարևորագույն կենտրոն Աստրախանում 17-րդ դարի կեսին հայկական, բուխարական, դիլանական և հնդկական գաղութների առաջ գալը սերտորեն կապված էր արևելյան երկրների և ռուսական պետության միջև առևտրա-դիվանագիտական հարաբերությունների ընդլայնման հետ։

18-րդ դարի սկզբին Աստրախանի հայկական գաղութում, համաձայն հոլանդական ճանապարհորդ Դե Բրուինի վկայության, հաշվվում էր «մոտ 40 ընտանիք»[1], այսինքն, 160—200 մարդ՝ յուրաքանչյուր ընտանիքը ընդունելով միջին հաշվով 4—5 մարդուց։ Դե Բրուինի ցուցմունքները ան-

---

[1] *Տես՝* „Астраханский сборник", выпуск 1, Астрахань, 1896, стр. 186.

ուղղակի կերպով հաստատվում են այլ աղբյուրներով։ Այսպես, հայտնի է, որ 1706 թ. Աստրախանի հայերին է պատկանել 30 տուն[1]։

Հայերի նախկինում սկսված գաղթը Ռուսաստան 18-րդ դարում ավելի մեծ թափ ստացավ[2]։ Հայ բնակչության նոր հոսանքը Ռուսաստան, առաջ բերեց Աստրախանի հայկական գաղութի ազգաբնակչության քանակի զգալի ավելացում։ Այսպես, կես հարյուրամյակից էլ պակաս ժամանակաշրջանում Աստրախանի հայ բնակչությունն աճեց համարյա 8 անգամ և 18-րդ դարի կեսին մեկ և կես հազար մարդուց ավելի էր[3]։

Հայ գաղթականների հոսանքը դեպի Ռուսաստան պայմանավորված է մի շարք պատճառներով։

18-րդ դարի առաջին կեսին, պարսիկ և թուրք ֆեոդալների իշխանության տակ գտնվող հայ ժողովրդի վիճակը խիստ վատացել էր և դարձել իսկապես ողբերգական։ 20-ական թվականներին, հայերը, վրաց ու ադրբեջանական ժողովուրդների հետ դաշնակցած, զինված պայքար են սկսում օտարերկրյա լծի դեմ։ Այս պայքարը, սակայն, նրանց ազատագրում չբերեց։

Թուրքական և պարսկական ֆեոդալները, ճնշելով Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը, նրանց ենթարկեցին առավել դաժան ազգային ճնշման, լկտի կողոպուտի և բռնության։

Սրա հետևանքով հայերը ստիպված էին զանգվածներով թողնել հարազատ վայրերը և ապաստան փնտրել այլ երկրներում, նախ և առաջ Ռուսաստանում։

Դեպի Ռուսաստան հայերի կատարած գաղթի մեջ էական դեր էր խաղում 18-րդ դարում ռուսական կառավարության վարած հովանավորական քաղաքականությունը արևելցիների՝ ինչպես առևտրական նպատակներով ժամանակավորապես եկածների, այնպես էլ, հատկապես երկրի տարբեր քաղաքներում ընդմիշտ բնակություն հաստատածների նկատմամբ։

Արևելյան երկրների «օտարերկրացի մարդկանց» հովանավորությունը կազմում էր գործողության այն ընդարձակ ծրագրի կարևոր կետերից մեկը, որը կառավարությունը անշեղորեն իրականացնում էր՝ նպատակ ունենալով զարգացնել ռուս-արևելյան առևտրական և քաղաքական կապերը և ամրապնդել Ռուսաստանի դիրքերը Արևելքում։

Կառավարությունը շատ լավ գիտեր, որ նշանակալի քանակով առևտրականների և արհեստավորների հաստատվելը Ռուսաստանում և, մասնավորապես, այնպիսի խոշոր առևտրական կենտրոնում, ինչպիսին Աստրախանն էր, դրական ազդեցություն կունենար Անդրկովկասի, Պարսկաստանի, Միջին Ասիայի և Հնդկաստանի հետ ապրանքափոխանակության վրա և կնպաստեր Աստրախանի տնտեսական զարգացմանը։

Կառավարության առավել մեծ ուշադրությունը վայելում էին հայ և հնդիկ առևտրականները, որովհետև նրանք տեր էին նշանակալի դումարների, Արևելքի երկրներում ունեին առևտրական ընդարձակ կապեր և «հանձնակատարներից», այսինքն՝ գործակալների ու ընկերակիցների մի ամբողջ

[1] Государственный архив Астраханской области (ГААО), ф. 394, оп. 1, д. 2403, л. 1.

[2] *П. Т. Арутюнян*, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Москва, 1954, стр. 185—188.

[3] ГААО, ф. 394, оп. 1, д. 1284, л. 251.

ռանց։ Նրանք հրաշալի ծանոթ էին արևելյան շուկաների իրադրությանը։ Նրանցից շատերը բազմաթիվ ուղևորությունների ընթացքում ուսումնասիրել էին այն երկրների սովորույթները և անգամ լեզուները, որտեղ առևտուր էին անում։ Ինչ վերաբերում է հայ առևտրականներին, ապա նրանք սերտորեն կապված լինելով Ջուղայի առևտրական ընկերության հետ, որը մեծ դեր էր խաղում արևելա-եվրոպական առևտրի մեջ, դրանով իսկ կարող էին նպաստել Ռուսաստանի վրայով տարանցիկ առևտրի աճին և արևելա-եվրոպական առևտրում Ռուսաստանի միջնորդող դերի ուժեղացմանը, որին անշեղորեն ձգտում էր ռուսական կառավարությունը ինչպես 17-րդ, այնպես էլ, հատկապես 18-րդ դարում։

Կառավարության ձգտումը՝ Ռուսաստան հրապուրել որքան կարելի է շատ արևելցի առևտրականների, ավելի հասկանալի կդառնա, եթե հաշվի առնենք, որ 18-րդ դարի առաջին կեսում ռուս վաճառականությունը փոքր դեր էր խաղում Ռուսաստանի վրայով կատարվող ռուս-արևելյան և, առանձնապես, արևելա-եվրոպական տարանցիկ առևտրի մեջ[1]։

Չնայած մետաքսագործության ասպարեզում 18-րդ դարի կեսերին Ռուսաստանի ձեռք բերած հաջողություններին, նա դեռ հեռու էր ներքին շուկայի պահանջները բավարարելուց։ Իսկ բամբակյա գործվածքների արտադրությունը դեռևս նոր էր ստեղծվում։ Այդ պատճառով Ռուսաստանը ստիպված էր մեծ քանակությամբ բամբակյա և մետաքսյա գործվածքներ ու նրանցից պատրաստված ապրանքեղեն գնել եվրոպական և արևելյան երկրներում։ Բայց սա չէր համապատասխանում մերկանտիլիզմի սկզբունքներին, որոնց հետևում էր կառավարությունը իր տնտեսական քաղաքականության մեջ։ Բնական է, որ կառավարությունը շահագրգռված էր հայ արհեստավորների գաղթով, որոնք լավ ծանոթ էին մետաքսյա և բամբակյա գործվածքների պատրաստմանն ու ներկելուն։

Բացի այդ, գանձարանը մտադիր էր հայ վաճառականներին մասնակից դարձնել երկրում մետաքսի մանուֆակտուրաների կառուցմանը։

Հենց այդ պատճառով էլ կառավարությունը զանազան բնույթի արտոնություններ էր տալիս արևելյան երկրներից եկած մարդկանց, գլխավորապես առևտրականներին, չնայած այն բանին, որ այդ արտոնությունները որոշ չափով խփում էին ռուս վաճառականության շահերին և առաջ էին բերում վերջինիս բուռն բողոքը։

Արևելյան երկրներից եկած և Աստրախանում հաստատվածների նկատմամբ կառավարության հովանավորական քաղաքականությունը 18-րդ դ. երկրորդ կեսին իր արտահայտությունն է գտել Աստրախանի նահանգապետ Վոլինսկուն ուղարկած հրահանգի և Սենատի շատ այլ հրամանագրերի մեջ[2]։

Աստրախանում բնակություն հաստատած և ռուսական հպատակություն ընդունած արևելյան երկրներից եկածներին տրվում է առևտրաարդյունաբերական գործունեության լրիվ ազատություն։ Նրանք վայելում էին հավատի և կրոնական ծիսակատարությունների ազատություն։ Նրանց արգելված էր պոսադում բնակեցնել և որևէ ծառայության հանել։ Տե-

[1] *А. Юхт*, Восточная торговля России в 30—40-х годах XVIII в. и роль в ней армянских купцов, „Известия Академии наук Армянской ССР", 1956, № 8, стр. 57, 60—61.

[2] ПСЗ, т. VI, № 3622, т. VII, № 4304; т. XII, № 8919, 9311.

ղական իշխանության ներկայացուցիչները նրանց նկատմամբ պարտավոր էին լինել «սիրալիր և բարյացակամ... և հոգ տանել, որ ոչ ոքից նրանց ոչ մի վնաս չհասնի»։

Աստրախանում եղած գաղութների ազգաբնակչությունը օգտվում էր «իր օրենքներով դատարանի» իրավունքից[2]։

Սենատի 1746 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագրով հայկական գաղութում ստեղծվում է ռատհաուզ — ընտրովի օրգան, որը վարում էր դատարանը, հսկում հարկերի բաժանմանն ու հավաքմանը և աստրախանյան հայերի պարտավորությունների կատարմանը։ Ռատհաուզը սկսում է գործել 1747 թ. հունվարի 1-ից[3]։

Աստրախանում բնակված հայերի նկատմամբ կառավարության հովանավորական քաղաքականության մասին է վկայում և այսպիսի մի փաստ. 1706 թ. հայ վաճառական Բոգդան Կոնստանտինովը ե իր ընկերները աստրախանյան հայերի կողմից Մոսկվայում Պետրոս Ա-ի անունով տալիս են խնդրագիր, ուր գրում են, թե «Աստրախանում հնուց կառուցված է հայկական փայտաշեն եկեղեցի և այդ եկեղեցին այժմ միանգամայն խարխուլ է, իսկ Աստրախանում հայ բնակիչները նախկինի համեմատ բազմապատկվել են»։ Հայերը խնդրում էին թույլտվություն՝ քարե եկեղեցի կառուցելու համար։

Պետրոս Ա-ը բավարարում է նրանց խնդրանքը և խնդրագրի տալու հաջորդ օրը՝ հուլիսի 9-ին աստրախանյան վոյեվոդ Խովանսկուն ուղարկում հրամանագիր, որով կարգադրում է, որպեսզի «այդ եկեղեցու շինարարության մեջ (հայերին) ոչ մի արգելք չհարուցվի»։

Նուտով հայերը իրենց հաշվին կառուցում են քարաշեն մայր եկեղեցի[4]։ Նույն դարի 30-ական թվականներին նրանք Աստրախանում կառուցում են ևս մեկ եկեղեցի[5]։

Կառավարությունը հայերին և մյուս արևելցիներին արտոնություններ տալով, հույս ուներ, որ այդ մասին հայտնի կդառնա արևելյան երկրներում և դեպի Ռուսաստան գաղթողների ավելի մեծ հոսանք կառաջանա։ Այսպես, Սենատի 1723 թ. հրամանագրում ուղղակի ասվում է, թե Աստրախանում հաստատված օտարերկրացիներին տրված արտոնությունները պետք է «մյուս օտարերկրացիների մեջ էլ Աստրախան ժամանելու ցանկություն առաջացնեն»[6]։

Սկզբնաղբյուրները վկայում են այն մասին, որ հայ գաղթականների նկատմամբ ռուսական կառավարության հովանավորողական քաղաքականությունը Անդրկովկասի, Պարսկաստանի և Թուրքական կայսրության հայ

---

[1] ПСЗ, т. VI, № 3622, пункт 53.

[2] ПСЗ, т. XII, № 8919.

[3] ПСЗ, т. XII, № 9311; ГААО, ф. 394, оп. 1, д. 1357, л. 95.

[4] Центральный Государственный Архив древних актов (ЦГАДА), фонд „Сношения России с Арменией" (100), 1706 г., д. 1, лл. 34—35 об.; *И. Савинский*, Армяне в астраханской епархии. Астрахань, 1900, стр. 7.

[5] ГААО, ф. 394, оп. 1, д. 618, лл. 55—56. *Աստրախանում առաջին հայկական եկեղեցին կառուցվել է 1640 թ.* (*В. Восканян*, Армяно-русские экономические отношения в XVII веке, рукопись кандидатской диссертации, Ереван, 1948, стр. 69).

[6] ПСЗ, т. VII, № 4304.

բնակչության մեջ բավական լայն հոչակ էր ստացել։ Դրա շնորհիվ հայերի Ռուսաստան գաղթելու ձգտումը մեծանում է։ Այս տեսակետից շատ ուշագրավ է աստրախանյան հայեր Սքանդար Աղարեկովի, Մ. Բաղդասարովի ու նրանց ընկերների ցուցումը։

1745 թ. սեպտեմբերին նրանք գրել են.

«Մեր մարդիկ... վաճառականները, այլև արհեստավորները, ինչպես և մենք՝ վերոհիշյալներս նախկինում ռուսական կայսրություն եկած օտարերկրացիներից լսելով... մեզ ուղղված բարեհաճ հրավերներ, և առևտրում ու արհեստներում ազատություն տալու խոստումներ, թողնելով մեր երկրներում մեր գործերը, տները, գործարանները և ամենակարևորը՝ մեր հայրենիքը, Պարսկաստանից, Թուրքական մարզից և այնտեղի այլ հեռավոր տեղերից՝ տարբեր ժամանակներում, վաճառականների հետ, մեր այդ առևտրի ու արհեստների համար եկանք Աստրախան։ Եվ (այստեղ) տեսնելով մեր առևտրի և արհեստների համար ազատություն...» ընդմիշտ մնացինք Ռուսաստանում[1]։

Այս վաստաթղթից և Աստրախանի հայ գաղութի բնակչության թվի մասին վերը բերված տվյալներից հետևում է, որ դեպի Ռուսաստան «օտարերկրացիների» գաղթի մասին ռուսական կառավարության ունեցած հույսերը միանգամայն արդարացան։

Պարսկական արշավանքի հետևանքով Կասպից ծովի վրա Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը և 18-րդ դարի երկրորդ քառորդում Անդրկովկասի ու Պարսկաստանի հետ արտաքին առևտրական շրջանառության կապերի սաճը ևս նպաստում էին հայերի գաղթին դեպի Աստրախան և ռուսական մյուս քաղաքները։

Ռուսաստանում բնակություն հաստատած այն հայերը, որոնք ցանկանում էին ընդունել ռուսական հպատակություն, ցարի անունով խընդրագիր էին ներկայացնում։ Այդ խնդրագրերը արժեքավոր աղբյուր են հանդիսանում հայերի Ռուսաստան գաղթելու պատճառների ուսումնասիրման համար։ Միաժամանակ, նրանցում կան նաև այլ կարևոր տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս պարզելու խնդրագրողի սոցիալական դրությունը, կամ զբաղմունքը, «դրամագլխի» չափը, ծնընդավայրը, Աստրախանում բնակություն հաստատելու ժամանակը։

Ահա դրանցից մի քանիսը։

Հայ Աղամալ Նազարովը 1753 թ. օգոստոսի 5-ի իր խնդրագրում գրել է. «...Ես, վերոհիշյալս, Նախիջևանից եմ և եկել եմ Աստրախան 1744 թ. և այդ ժամանակից ապրում եմ այստեղ և նկատեցի, որ Համառուսաստանյան ՆԿՄ Կայսրության մեջ արտասահմանյան մարդկանց վաճառականության և այլում (այլ զբաղմունքներում) ազատություն և ճընշումներից պաշտպանություն և արդարադատություն է տրվում»։ Եվ գրա համար ես ցանկություն ունեմ լինել Համառուսաստանյան ՆԿՄ հպատակ և ապրել Աստրախանում՝ իմ տանը և գրվել այստեղ Աստրախանյան քաղքենի...»։

Նազարովը նշում է, որ ունի «80 ռուբլու դրամագլուխ» և պարտա-

---

[1] ЦГАДА, ф. 248. кн. 39/943, л. 120 об.

վորվում է կատարել բոլոր պարտավորությունները աստրախանյան մյուս հայերի հետ միասին։

Ոչ պակաս տիպիկ է խոշոր հայ վաճառական Մատվեյ Միխայլովի վկայությունը, որը առևտրական գործերով Ռուսաստան էր եկել «Արաբական երկրի Հալեպ քաղաքից»։ Մի քանի տարի լինելով Ռուսաստանում (Աստրախանում, Մոսկվայում, Պետերբուրգում) նա համոզվում է, որ այնտեղ ապրողներին ամենափոքր վիրավորանք անգամ (ինչպես այդ լինում էր Թուրքական և ասիական մյուս երկրներում) չի հասցվում, այլ ամեն բանում արդարություն է, թույլատրվում է ազատ առևտուր։ Այդ գործում մեծ առավելություններ են տրվում նրանց, ովքեր օտարերկրացիներ են և իրենց կամքով ռուսական հպատակություն են ընդունել։

Մատվեյ Միխայլովը ոչ միայն ինքը ռուսական հպատակություն է ընդունում ու հաստատվում Աստրախանում, այլև Հալեպից կանչում է իր հարազատ եղբորը՝ ավելի խոշոր վաճառական Շուքրի Միխայլովին[2]։

Ռուսաստանում, մասնավորապես Աստրախանում, իրենց հաստատվելու նույնանման պատճառների մասին են հայտնում նաև տասնյակ այլ հայեր[3]։

Այսպիսով, հայերի այն համոզմունքը, թե Ռուսաստանում իրենք կունենան անձի և գույքի ապահովություն նրանց, Ռուսաստան գաղթելու և ռուսական հպատակություն ընդունելու հիմնական պատճառներից մեկն էր։ Անձնական փորձով նրանք համոզվում էին, որ Ռուսաստանում կան բարենպաստ պայմաններ առևտրական և արդյունաբերական գործունեության համար, որ այստեղ նրանք կկարողանան պահպանել իրենց լեզուն, հավատը, սովորույթները։

18-րդ դարի առաջին քառորդում Աստրախանի հայ բնակչության շարժման ուսումնասիրության հիմնական աղբյուրն են հանդիսանում աստրախանյան հայերի ստուգման ցուցմունքները (ревизские сказки)[4]։

Ցուցմունք ներկայացնողը իր մասին մեծ մասամբ հաղորդում էր հետևյալը. ազգանունը, անունը, տարիքը, ծննդավայրը, Աստրախանում բնակություն հաստատելու ժամանակը, զբաղմունքը, դրամագլխի չափերը, եթե այդպիսին կար, ընտանիքի արական սեռի անդամների թիվը, արդյոք տնատեր է, թե ոչ։ Պետք է նշել, որ ցուցմունքի ներկայացողները միշտ չէ, որ այդպիսի մանրամասն տեղեկություններ էին հաղորդում։ Նրանցից ոմանք չէին նշում, օրինակ, զբաղմունքը, Աստրախանում բնակություն հաստատելու ժամանակը և այլն։

Երբեմն, ցուցմունք տվողը նշում էր, որ իր «բակում» (տանը) կամ իրեն կից ապրում է հայ և հաղորդում էր նրա միայն ազգանունը։

Ցուցմունքներում ազգականների մասին, սովորաբար, տեղեկություններ չեն տրվում։ Ստուգման ցուցմունքների այս առանձնահատկությունները դցում են նրանց աղբյուրագիտական արժեքը և դժվարացնում օգտագործումը։ Բայց քանի որ մենք չունենք այլ աղբյուրներ, ապա ստիպ-

---

[1] ГААО, ф. 394, оп. 1, доп. д. 111, 1—2.

[2] ЦГАДА, ф. „Канцелярия Правительствующего Сената" (248), книга 27/931, лл. 381—382.

[3] ГААО, ф. 394, оп. 1, дд. 1248, 1634, 1857, 1926.

[4] ЦГАДА, ф. „Ландратских книг и ревизских сказок" (350), 1724, д. 147.

ված ենք սահմանափակվել նրանց տվյալներով, չնայած, որ դրանց հիման վրա կարելի է կազմել 18-րդ դարի 1-ին քառորդի ընթացքում Աստրախանի հայ բնակչության շարժման միայն մոտավոր պատկերը։

Առաջին ստուգման տվյալների համաձայն Աստրախանի հայկական գաղութում կար 336 հոգի արական սեռի։ Սրանցից 176 հոգին, որպես ընտանիքի ղեկավարներ, ներկայացրել են ստուգման ցուցմունքներ[1]։ Զեռքի տակ մենք ունենք 121 ցուցմունք[2], այսինքն՝ ընդհանուր թվի մոտ 70%-ը։

Ցուցմունքների քննությունը ցույց է տալիս, որ 121 մարդուց 71-ը հաստատվել են Աստրախանում 18-րդ դարի առաջին քառորդում (1700—1723), 27-ը ծնվել են այստեղ 17-րդ դարի վերջին քառորդում, կամ 18-րդ դարի սկզբին, 7 հոգի Աստրախան են եկել այս նույն ժամանակ։ 16 ցուցմունքներում բնակություն հաստատելու ժամանակի մասին տեղեկություններ չկան։ 18-րդ դարի 1-ին քառորդին Աստրախանում հաստատված հայերից 24-ը հաստատվել են (1700—1710) 34-ը՝ 1711—1720 թթ. և 13-ը՝ 1721—1723 թթ.։

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ Աստրախանի հայ բնակչության թիվը 18-րդ դարի առաջին քառորդի ընթացքում ավելացել է, գլխավորապես, նոր վերաբնակիչների հաշվին։

Աստրախանում հաստատված այն հայերը, որոնք միջոցներ ունեին, ձգտում էին սեփական տներ ձեռք բերել։ Այսպես, 1708 թ. հայերը գնել և կառուցել են 8, իսկ 1710 թ.—10 տուն[3]։

Հայերը Աստրախանում բնակվում էին կոմպակտ։ 1705—1706 թթ. աստրախանյան ապստամբության ճնշումից հետո ստրելեցյան բոլոր գնդերը Աստրախանից դուրս բերվեցին, իսկ նրանց ընտանիքները արտաքսվեցին[4]։ Հայերը գնեցին ստրելեցիներին պատկանած տների մի մասը, և նախկին ստրելեցյան թաղամասի տեղում, 18-րդ դարի առաջին քառորդում, ստեղծվեց հայկական թաղամասը, որը ստացավ «նոր» անունը, ի տարբերություն հին թաղամասի, որը գտնվում էր քաղաքի այլ մասում։

18-րդ դարի երկրորդ քառորդում Աստրախանի բնակիչների (արական սեռի) տարբեր խավերի քանակը և նրանց պատկանած տների թիվը տրված է № 1 աղյուսակում[5]։

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ Աստրախանի հայկական գաղութը 18-րդ դարի կեսում ամենախոշորն էր արևելյան երկրներից գաղթածներով բնակեցված մյուս թաղամասերի մեջ։

Արդ, Աստրախանի բնակչության ո՞ր տոկոսն էին կազմում հայերը։ Դժվար է այս հարցին ճիշտ պատասխան տալ, որովհետև հաշվել Աստրախանի մշտական բնակչության քանակը 18-րդ դարի կեսերին, ըստ եղած աղբյուրների, հնարավոր չէ։ Որոշ պատկերացում այդ հարցի վերաբերյալ

---

[1] ГААО, ф. 394, оп. 1, д. 142, лл. 130 и об.

[2] Ընդամենը պահպանվել են 125 ցուցմունքներ, որոնցից չորսը այրիներն են տվել (ЦГАДА, ф. 350, 1724 г., д. 147).

[3] ЦГАДА, ф. „Астраханская приказная палата" (1104), дд. 4, 5, 6.

[4] *М. Д. Рабинович*, Стрельцы в первой четверти XVIII в., „Исторические записки", т. 58, 1957, стр. 293—296.

[5] ГААО, ф. 394, оп. 1, д. 142, лл. 130 и об.; д. 1248, л. 65 об.; д. 1278, л. 100; д. 1284, л. 62, д. 1297, л. 90; ф. 394, оп. 1, доп. д. 76, лл. 30—75; 160—203 об., 209 об.

Աղյուսակ 1

Թվականներ	Պոսադ		Հայկական թաղամաս		Բուխարական թաղամաս		Գիլանական թաղամաս		Ադրիժանական թաղամաս[1]		Հնդկական գաղութ		Կազանի թաղամաս[2]	
	մարդիկ	տներ	մարդիկ	տներ	մարդիկ	տներ	մարդիկ	տներ	մարդիկ	տներ	մարդիկ	տներ	մարդիկ	տներ
1724[3]	1456	—	336	106	—	—	—	—	—	—	101	—	165	—
1747	1891	—	776[4]	268	469	139	178	38	109	21	76	—	237	82

կարող են տալ Աստրախանի տների ընդհանուր քանակի և հայերին պատկանած տների քանակի մասին եղած տվյալները։ 18-րդ դարի 40-ական թվականներին Աստրախանում եղել է մոտ 2400 տուն[5], որոնցից հայերին էին պատկանում 268-ը, կամ 11,1%-ը։ Նույնիսկ այս հարաբերական տվյալներից, իսկ գլխավորապես № 1 աղյուսակի տվյալներից, ակներև է, որ Աստրախանի բնակիչների մեջ հայ բնակչության տեսակարար կշիռը բավական բարձր է եղել։

Ինչպես ցույց են տալիս № 1 աղյուսակի տվյալները, 18-րդ դարի երկրորդ քառորդում Աստրախանի հայկական գաղութի բնակչությունը ավելացել էր ավելի քան երկու անգամ։ Դժբախտաբար, աղբյուրներում չկան տեղեկություններ առաջին ստուգման ժամանակ բուխարական, գիլանական և ադրիժանական թաղամասերի բնակչության թվի մասին, քանի որ նրանց բնակիչները շնչահարկ չէին տալիս և այդ պատճառով էլ մարդահամարի չէին ենթարկված։

Սակայն, քիչ ավելի ուշ շրջանին վերաբերող տվյալները թույլ են տալիս պնդելու, որ 18-րդ դարի երկրորդ քառորդում այդ թաղամասերի բնակչությունը նույնպես ավելացել էր, թեև ոչ այն չափով, ինչ հայկականը[2]։

Դժվար չէ նկատել նաև, որ առաջին և երկրորդ ստուգումների միջև եղած ժամանակաշրջանում արևելյան եկվորներից կազմված թաղամասերի բնակչությունն աճել էր նշանակալիորեն ավելի արագ, քան աստրախանյան պոսադի և Կազանի թաղամասի բնակչությունը։

---

1 Ադրիժանական թաղամասը ստեղծվել է 17-րդ դ. վերջին քառորդում ռուսական հպատակություն ընդունած հնդիկներից և հնդիկների ու աստրախանյան թաթարուհիների սերնդից։ «Ադրժան» տերմինը Ֆ. Շպերկի բացատրությամբ նշանակում է «անչափահաս» կամ «երիտասարդ», այսինքն՝ նոր բնակիչ (տե՛ս Ф. Шперк, Индусы в Астрахани... „Астраханский листок", 1898 г., № 52)։

Հետագայում, Ադրիժանական թաղամասում ապրում էին Արևելքի զանազան երկրներից եկած զաղթականներ (ф. 394, оп. 1, д. 1023)։

2 Կազանի թաղամասը ստեղծվել էր 18-րդ դարի առաջին քառորդում՝ Կազանից տեղափոխված թաթարներից։

3 Տվյալներ երեք արվարձանների բնակչության, ինչպես նաև նրանց ու արվարձանի բնակիչների տների քանակի մասին 1724 թվականի վերաբերյալ, մենք չունենք։

4 Հայկական գաղութում մշտական բնակիչներ 1747 թվականին հաշվվում էր 1512 մարդ՝ արական և իգական սեռի։ Բացի նրանցից, ժամանակավորապես Աստրախանում էին ապրում որոշ քանակությամբ հայեր, գլխավորապես առևտրականներ, նրանց ծառաներն ու գործակատարները (ф. 394, оп. 1, д. 1281, л. 251)։

5 ГААО, ф. 394, оп. 1, д. 1024, лл. 3 об.—24 об.

6 ГААО, ф. 394, оп. 1, д. 1004, лл. 119—124.

Եվ, իհարկե, խոսքն այստեղ այն մասին չէ, թե նշված թաղամասերում բնակչության բնական աճն ավելի է եղել, քան պոսադի բնակչությանը, այլ այն մասին, որ այդ շրջանում նկատվում է արևելյան երկրներից գաղթածների ուժեղ հոսանք դեպի Աստրախան։

Նման եզրակացությունը հիմնված է երկրորդ ստուգման տվյալների վերլուծության վրա, որոնք արտացոլում են Աստրախանի հայ բնակչության կյանքում 18-րդ դարի երկրորդ քառորդի ընթացքում կատարված փոփոխությունները։

Քննենք այդ, անտարակույս հետաքրքրություն ներկայացնող, փոփոխությունները։

Առաջին և երկրորդ մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում Աստրախանի հայկական գաղութում եղել են 171 և «տարբեր առիթներով» հեռացել 39, ընդամենը 210 հոգի՝ արական սեռի։ Նույն այդ ժամանակաշրջանում թաղամասի բնակչությունը բնական աճի հետևանքով մեծացել էր 170 հոգով (արական սեռ)[1]։ Հետևապես, եթե դրսից դեպի գաղութ հոսանք չլիներ, ապա նրա բնակիչների քանակը 1744 թ. այսինքն՝ «Աստրախանի Նահանգի գլխավոր ստուգման գրասենյակ»-ին տեղեկություններ տալու մոմենտին, կլիներ ավելի քիչ, քան 1724 թ.։ Ուշագրավ է հայ բնակչության մեծ մահացությունը։ 20 տարվա ընթացքում թաղամասում մեռել է նրա բնակիչների կեսը։ Սակայն, այդ տեսակետից հայկական գաղութը ամենևին բացառություն չէր կազմում, ընդհանրապես Աստրախանում բնակչության մահացության տոկոսը բարձր է եղել։ Կեղտոտ, անբարեկարգ քաղաքում, ինչպիսին էր Աստրախանը 18-րդ դարում, հաճախ բռնկվում էին վարակիչ հիվանդություններ, որոնք գերեզման էին տանում հարյուրավոր բնակիչների։ Շատ մարդիկ կործանվեցին 1727—1728 թթ., երբ քաղաքում մոլեգնում էր Պարսկաստանից բերված ժանտախտը։ Այդ սարսափելի տարիներին քաղաքը զրկվեց իր բնակիչների համարյա կեսից[2]։

Աղբյուրները թույլ են տալիս քննել և այն մարդկանց բախտը, որոնց մասին Աստրախանի հայկական գաղութի բնակիչների ցուցմունքներում ասվում է, թե՝ նրանք հեռացել են «տարբեր պատճառներով»։ Նրանցից ոմանք գրվել են «Սերբինյանց» դրագունյան գնդում (6 մարդ), ուրիշները մեկնել են Աստրախանից և բնակություն հաստատել Ռուսաստանի տարբեր քաղաքներում, ոմանք էլ ընդունել են հունական հավատի դավանությունը և գրվել ապրելու պոսադում։ Մնացածների մասին, որոնք մեծամասնություն էին կազմում, ասված է, թե նրանք գտնվելով Աստրախանից հեռու «ծովից անդին», Բուխարայում, Խիվայում և այլ վայրերում, «կորել են անհետ»[3]։

Հայկական գաղութի բնակիչների ցուցմունքները հնարավորություն են տալիս պարզելու, թե երկու մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանի որ տասնամյակներում, ո՞ր երկրներից ու վայրերից է եղել հայերի ամենից ավելի ուժեղ հոսանքը Աստրախան, ինչպես նաև նրանց սոցիալական կազմը։

[1] ГААО, ф. 394, оп. 1, доп. д. 76, лл. 30—73.
[2] ГААО, ф. 394, оп. 1, д. 152, л. 238.
[3] ГААО. ф. 394, оп. 1, доп. д. 76, лл. 42—43.

1723—1729 թթ. Աստրախանում հաստատվել են արական սեռի 28 մարդ, 1730—1739 թթ.—118 և 1740—1747 թթ.—112։ (Այս տվյալները վերաբերում են ընտանիքների ավագներին, իսկ ընդհանուր առմամբ, ինչպես արդեն նշվեց, 1724—1747 թթ. ընթացքում հայկական գաղութի մշտական բնակիչների թիվը աճել է 480 շնչով արական սեռի)։

Այսպիսով, հայերի ամենամեծ հոսանքը Աստրախան նկատվում է 18-րդ դարի 30—40-ական թվականներին, իսկ 20-ական թվականներին այն մեծ չէր։

Աստրախանում նոր հաստատված հայերը դուրս էին եկել Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Պարսկաստանի, Թուրքիայի և Ղրիմի ավելի քան 40 տարբեր քաղաքներից։ Նրանց մեջ գերակշռում էին եկվորները Անդրկովկասի քաղաքներից՝ Շամախիից (40 շունչ, արական սեռի), Փառակից և Ագուլիսից (30), Գանձակից (18), Երևանից (15)։ Պարսկաստանի քաղաքներից եկվորների ամենամեծ թիվն ընկնում էր Սպահանի և Ջուղայի (24), Արդաբիլի (11), Թավրիզի (8), Ղազվինի (7) վրա և այլն։ Հանդիպում ենք նաև Կ. Պոլսի, Թոքաթի, Հալեպի բնակիչների[1]։

Այսպիսով, Աստրախանում հաստատված հայերը եկվորներ են Մերձավոր և Միջին Արևելքի զանազան քաղաքներից, ըստ որում, նրանց մեծ մասը եկել էր Անդրկովկասից։ Հայերի տերիտորիալ ծագման մասին եղած տվյալները վկայում են նաև, որ նրանց մեջ գերակշռում էին խոշոր առևտրաարհեստագործական կենտրոններ հանդիսացող քաղաքների բնակիչները։

Առաջին մարդահամարից հետո Աստրախանում բնակություն հաստատեցին նաև մոտ 15—20 հայ ընտանիք՝ Չերկասից, Ղզլարից և Սարատովից։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման որոշ մասնակիցներ ու ղեկավարներ ևս շարժման ճնշումից հետո տեղափոխվեցին Ռուսաստան (Աստրախան, Ղզլար և այլ քաղաքներ). օրինակ, Աստրախանում հաստատվեց Ղարաբաղի սղնախների կայուն և խիզախ ղեկավարներից մեկը՝ Ավան Յուզբաշին, որը Ռուսաստան մեկնեց 1728 թ. իր դինակիցների մի մեծ խմբի ուղեկցությամբ։ Յուզբաշիներից շատերը ծառայության էին ընդունվել «հայկական շեվադրոնում» (էսկադրոն) և ռոճիկ էին ստանում։ Աստրախանի նահանգական գրասենյակի 18-րդ դ. 30-ական թվականների վճիռներում կան շատ գրանցումներ նրանց ռոճիկ տալու մասին։ Այսպես, օրինակ, 1837 թ. հունվարի 21-ին գրասենյակը, համաձայն Սենատի և Ռազմական կոլեգիայի հրամանագրերի, կարգադրում է «Հայկական համայնքից եկած, ՆԿՄ ծառայության ընդունված յուզբաշիներ Բաղիր և Գրիգոր Ստեփանովներին նոր կազմած աղյուսակով վճարել դրույքային աշխատավարձը անցյալ՝ 1736 թ. համար, և տալ Բաղիրին ռոճիկ՝ 120, պարգևատրում՝ 50, ընդամենը 170 ռուբլի, Գրիգոր Ստեփանովին՝ ռոճիկ 30, պարգևատրում՝ 10, ընդամենը 40 ռուբլի»[3]։

Ավան-Յուզբաշու մահից հետո 1735 թ. կառավարությունը կարգա-

---

[1] ГААО, ф. 394, оп. 1, доп. д. 76, лл. 54—67, 70—75, 175—196 об.; 201 об.—203, 209 об.

[2] *П. Т. Арутюнян*, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, стр. 238.

[3] ГААО, ф. 394, оп. 1, 1737 г., д. 617, л. 30 об.

դրում է նախկինի նման վճարել նրա ռոճիկը ընտանիքին (կնոջը և որդուն)[1]։

Աստրախանում հաստատված հայերի սոցիալական կազմը առաջին մարդահամարից հետո բնորոշվում է հետևյալ տվյալներով[2]։

Աղյուսակ 2

Ընդամենը մարդիկ	Նրանցից											
	Առևտրականներ		Արհեստավորներ		Վարձու բանվորներ		Ծառաներ		Գործակատարներ		Այլք	
	քան.	%	քան.	%	քան.	%	քան.	%	քան.	%	քան.	%
258[3]	75	29	101	39,1	43	16,6	19	7,3	14	5.4	6	2,3

Այսպիսով, Աստրախանում նոր հաստատված հայ արական սեռի ազգաբնակչության մեջ ամենից ավելի նշանակալից սոցիալական խմբերն էին արհեստավորները, վաճառականները և վարձու բանվորները։

Աղյուսակի տվյալները վկայում են նաև, որ մանր արտադրողները և արտադրության միջոցներից զուրկ մարդիկ կազմում էին Աստրախան եկած հայերի ընդհանուր թվի 3/4-ը։

Հետևաբար, 18-րդ դարի երկրորդ քառորդում հայկական գաղութը համալրվել է գլխավորապես աշխատավոր խավերով, մի բան, որն իր հերթին պետք է անդրադառնար գաղութի ողջ բնակչության սոցիալական կազմի վրա։

Աստրախանի հայկական գաղութը ներհոսած բնակչության սոցիալական կազմի մասին արված ընդհանուր տվյալներից անցնենք առանձին սոցիալական խմբերի, գլխավորապես արհեստավորների և առևտրականների վերլուծությանը։ Այսպիսի վերլուծությունը թույլ կտա ցույց տալու՝ նախ, որ վերոհիշյալ խմբերից և ոչ մեկը միասնական չէր և նրանց ներկայացուցիչների միջև կային էական տարբերություններ, երկրորդ, այդ խմբերի դերը հայկական գաղութի բնակչության արհեստագործական և առևտրական գործունեության մեջ։

Առևտրականների մեջ կային խոշոր վաճառականներ, որոնք ունեին մի քանի հազար ռուբլու «սեփական դրամագլուխ» և մանր վաճառականներ, որոնց «դրամագլուխը» կազմում էր 20—30 ռուբլի։ Մանր առևտրականների մեջ հանդիպում են և այնպիսիք, որոնց մասին ցուցմունքում ասվում է՝ թե «առևտուր են անում փոքր քանակի զանազան ապրանքներով, որոնք վերցնում են պարտքով՝ միայն իրենց կերակրման համար»[4]։

Աստրախանում հաստատված և ռուսական հպատակություն ընդունած խոշոր հայ վաճառականների մեջ 18-րդ դարի 30—40-ական թվականներին ամենից ավելի աչքի ընկնող դեմքերից էին եղբայրներ Թաթոս և Շուքրի Միխայլովները, Սերգեյ Իվանովը, Կալուստ Ռունիաթովը, Դավիթ Գրիգորևը, եղբայրներ Առաքել և Մարտիրոս Իվանովները, Խաչատուր Մելքումովը։ Հայկական ռատհաուզի տվյալներով այս բոլոր վաճառականների

[1] ГААО, ф. 394, оп. 1, 1737 г., д. 618, л. 128.
[2] ГААО, ф. 394, оп. 1, доп. д. 76, лл. 175—196 об., 201 об., 203, 209 об.
[3] Արական սեռի մյուս 222 անձը կազմում էին երեխաները և ազգականները։
[4] ГААО, ф. 394, оп. 1, доп. д. 76, л. 268 об.

դրամագլուխը 1747 թ. հավասար էր 37 հազ. ռուբլու, այսինքն՝ կազմում էր բավական գգալի մի գումար։ Ըստ որում, ոատհաուգում արտացոլվում էին վաճառականների ցուցումները, որոնք ավելի շուտ հակված էին փոքրացնելու, քան մեծացնելու իրենց դրամագլխի չափը։ Թվարկված վաճառականները մտնում են Աստրախանի հայ վաճառականության վերնախավի մեջ և գրավում առաջին տեղերը։

Այս վաճառականները վարում էին մեծածախ առևտուր, ամեն տարի Աստրախանի հայկական վաճառատանը վարձում էին 3—5 խանութ, առևտրական օպերացիաներով կապված էին երկրի կարևորագույն կենտրոնների (Մոսկվայի, Մակարևսկայա տոնավաճառի, Կազանի, Նիժնի-Նովգորոդի և մյուսների) հետ։ Նրանք գործունյա մասնակցություն էին ցույց տալիս ռուս-արևելյան և եվրոպա-արևելյան տարանցիկ առևտրին, ըստ որում, եվրոպա-արևելյան առևտրին մասնակցում էին հայկական առևտրական ընկերության հետ համատեղ։

Տարանցիկ առևտրում այս վաճառականների տարեկան շրջանառությունները ներկայացված են 3-րդ աղյուսակում[1]։

Աղյուսակ 3

Վաճառականի ազգանունը	Մետաքսի տարանցումը Եվրոպա/ռուբլիներով/			Եվրոպական ապր. տարանցումը Անդրկովկաս և Պարսկաստան		
	1744 թ.	1747 թ.	1748 թ.	1745 թ.	1746 թ.	1750 թ.
Տ. և Հ. Միխայլովներ . .	2219	3223	10501	34832	22293	69545
Սերգեյ Իվանով[2]	—	9596	27200	—	—	43634
Կալուստ Բունիատով . . .	12011	22480	6632	10834	21913	56797
Դավիթ Գրիգորև	—	11024	3008	629	11597	9138
Խաչատուր Մելքումով . .	9155	10129	3446	4289	1296	3607
Ա. և Մ. Իվանովներ . . .	12665	—	—	2035	6474	—
	36050	56452	50787	52619	63573	182721

3-րդ աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ վերոհիշյալ վաճառականների տարեկան շրջանառությունը տարանցիկ առևտրում աճում է և 18-րդ դարի կեսին հասնում հսկայական չափերի։ Նախկին հայ վաճառականների և հայկական գաղութը նոր մտածների առևտրական գործունեությունը հայ վաճառականությանը դուրս բերեց առաջին տեղերից մեկը քաղաքի մյուս առևտրականների մեջ։

18-րդ դարի 2-րդ քառորդում Աստրախանում բնակություն հաստատած 67 մանր արտադրողների մեջ մտնում էին տարբեր մասնագիտությունների արհեստավորներ՝ ջուլհակներ, արծաթագործներ, դերձակներ, կոշկակարներ, դգակակարներ, ներկարարներ և այլն։ Ամենից մեծ թիվ էին կազմում ջուլհակները։

Տարբեր մասնագիտությունների արհեստավորների գույքային վիճակը միատեսակ չէր։ Օրինակ, արծաթագործները և ներկարարները, ընդհա-

[1] Աղյուսակը կազմված է Մաքսային դրքերի տվյալների հիման վրա ф. 681, оп. 1, 1745 г., д. 3077, 1746 г., 3084, 1747, д. 3086, 1748 г., д. 3091, 1750 г., д. 3098 և ըստ նահանգական գրասենյակի գործի ф. 394, оп. 1, доп., 1747 г., д. 75, лл. 307—443:

[2] Ս. Իվանովը Աստրախան է եկել Շամախիից 1746 թվականին և ռուսական հպատակություն է ընդունել 1747 թվականի հունվարին։

նուր առմամբ, ավելի ունևոր էին, քան կոշկակարները և դերձակները։ Առաջինների համարյա կեսը ուներ իր տունը զանազան շինություններով, մինչդեռ երկրորդների մեծամասնությունը ապրում էր վարձու տներում կամ «օտարների սենյակներում»։ Առաջիններից ոմանք ունեին որոշակի դրամագլուխ և խանութներ։ Կոշկակարների մեջ այդպիսիք չկային, դեռ ավելին, ռատհաուզի տվյալներով նրանք բոլորը իրենց արհեստով «հազիվ էին օրվա հացը վաստակում»[1]։

Այս տեսակետից ամենից ավելի բնորոշ օրինակ կարող են ծառայել ջուլհակ արհեստավորները։ Նրանցից ոմանք, ինչպես, օրինակ՝ Հարություն Եդգարովը, Իվանիս Մխիթարովը, Կարապետ Բերուևը, Նիկիտա Գրիգորևը, Խաչիկ Եվդոկիմովը ունեին 1—2 դազգահ և տարեկան արտադրում էին մի քանի տասնյակ ռուբլու արտադրանք, մյուսները, ինչպես Սարգիս Իվանիսովը, Թումա Կիտաևը, Մեսրոպ և Սահակ Մոսեևները, Վարակ Իվանիսովը ունեին 3—5 դազգահ, շահագործում էին երկու-երեք վարձու բանվորի աշխատանքը և ամեն տարի շուկա էին հանում մի քանի հարյուր ռուբլու արժողությամբ պատրաստի գործվածքեղեն։ Վերջինները փաստորեն վերածվել էին ոչ մեծ արհեստանոցների տերերի։ Որոշ մանր արտադրողներ, ինչպես, օրինակ՝ Դավիթ Կարապետովը, Գևորգ Արտեմևը, Գրիգոր Անտոնովը և Մանուկ Բաղիկովը արհեստին զուգընթաց զբաղվում էին նաև առևտրով։ Ռատհաուզի տվյալների համաձայն նրանք ունեին 150—200 ռուբլու «սեփական դրամագլուխ»[2]։

18-րդ դարի երկրորդ քառորդում արհեստավորների նոր խմբի առհասումը Աստրախանի հայկական գաղութը, նպաստեց մանր արտադրության զարգացմանը։ Պետք է հաշվի առնել, որ ջուլհակներ կային միայն հայերի մեջ և Աստրախանում մետաքսի առաջին մանուֆակտուրաների հիմնադիրները հայ վաճառականներն էին։ Իսկ արծաթագործների քանակով հայկական գաղութը 18-րդ դ. կեսերին գնում էր մյուս թաղամասերի և նույնիսկ աստրախանյան պոսադի առջևից։

Այսպիսով, Աստրախանում ջուլհակային արդյունաբերությունը իր զարգացմամբ հիմնականում պարտական էր հայ արհեստավորների ջանքերին և հայ վաճառականների դրամագլուխներին։

Աստրախանի հայկական գաղութի 18-րդ դարի 1-ին կեսի բնակչության սոցիալական կազմը ուսումնասիրելու համար մենք օգտագործել ենք 1724 թ. ստուգման ցուցմունքները և 1744 թ. ամփոփագրերը՝ կազմված գաղութի ավագների կողմից։

Ստուգման ցուցմունքների նյութը լրացված և ճշտված է 1744 թ. ամփոփագրով, որը պարունակում է որոշ տեղեկություններ առաջին ստուգման մասին, և մաքսագրերի տվյալներով։

1744 թ. ամփոփագրի տվյալները լրացված են նյութերով այն հայերի մասին, որոնք հաստատվել են առաջին ստուգումից հետո մոտակա տարիներին (1744—1747)։

---

[1] ГААО, оп. 1, доп. д. 76, л. 273.

[2] ГААО, ф. 394, оп. 1, доп. д. 76, лл. 160—193, 267—268; ф. 681, оп. 1, 1747 г., д. 632 („Книга сбора пошлин с заведенных при Астрахани разных чинов людьми фабрик") «Ֆաբրիկա» տերմինը այն ժամանակ նշանակում էր թե մանուֆակտուրային տիպի ձեռնարկություն, և թե մանր տնայնագործություն։ Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է տնայնագործությանը։

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է հայկական գաղութի սոցիալական կառուցվածքը, ըստ որում, բերվող տվյալները վերաբերում են ընտանիքների ղեկավարներին[1]։

Աղյուսակ 4

Թվականը	Ընդամենը (տնտ. ղեկավարներ)	Նրանցից															
		Առևտրականներ		Գործակատարներ		Արհեստավորներ		Վարձու բանվորներ		Ծառաներ		Աղքատներ		Այլք	
		քան.	%	քան.	%	քան.	%	քան.	%	քան.	%	քան.	%	քան.	%
1724	176	43	24 4	9	10,8	22	12,5	24	13,6	28	15,9	—	—	40	22,7
1747	453	116	25,8	25	5,7	148	32,7	79	17,4	49	10,8	19	4,2	17	3,7

Ինչպես 4 աղյուսակի տվյալներից երևում է, որ 18-րդ դարի երկրորդ քառորդում հայկական գաղութում նկատվում է բնակչության սոցիալական բոլոր խմբերի բացարձակ աճ, իսկ գլխավորապես արհեստավորների և առևտրականների աճ, առաջինների քանակն ավելացել է 7 անգամ, երկրորդներինը՝ 2,7 անգամ։ Ըստ որում, ընորոշ է, որ առևտրականների տեսակարար կշիռը գաղութի աղգարնակչության մյուս խավերի մեջ փոփոխություն չի կրել, մինչդեռ արհեստավորների տեսակարար կշիռը աճել է 12%-ից (1724 թվականին) մինչև 32,7%-ի (1747 թվականին)։ Ինչ վերաբերում է բնակչության մյուս խավերին, ապա պետք է նշել վարձու բանվորների թվի զգալի աճը և ընչազուրկների համեմատաբար մեծ խմբի առաջ գալը, որոնք, ըստ երևույթին, գոյություն ունեին և առաջին ստուգման շրջանում՝ «դրամագլուխ և արհեստ չունեցող մարդկանց մեջ»։

Դժվար չէ նկատել նաև, որ այս բոլոր խմբերի բացարձակ աճի հետ մեկտեղ, նրանց տեսակարար կշիռը գաղութի մնացյալ աղգարնակչության մեջ 18-րդ դ. 2-րդ կեսի մոտերքին ընկնում է։ Սա վերաբերում է, նախ և առաջ ճորտերին, ծառաներին և գործակատարներին։

Գաղութի բնակչության այսպիսի սոցիալական կառուցվածքը, նրա բնակիչների միջև ունեցվածքային խիստ շերտավորման առկայությունը, չքավորության և քայքայված մանր արտադրողների շահագործումը վաճառականների և ունևոր արհեստավորների կողմից, վաճառականական վերնախավի ձգտումը՝ հարկերի և զանազան պարհակների ողջ ծանրությունը գցել աշխատավոր խավերի վրա, անխուսափելիորեն պետք է հայկական գաղութի ներսում սոցիալական սուր հակասություններ և դասակարգային պայքար առաջ բերեին։

---

[1] ЦГАДА, ф. 100, 1713 г., д. 1, лл. 147, 252; 1717 г., д. 1, лл. 199—201; 1719 г., д. 1, лл. 135—136; ф. 350, 1724 г., д. 147; ГААО, ф. 394, оп. 1, 1724 г., д. 81; 1726 г., д. 112; ф. 681, оп. 1, 1725 г., д. 3061; ф. 304. оп. 1, доп. д. 47, лл. 137—153 об.; д. 76, лл. 175—196 об.: 201 об., 203, 209 об., 265—268.

[2] 1724 թ. «այլք» խմբի մեջ մտնում էին 15 մարդ, որոնց մասին ասված է, թե նրանք «դրամագլուխ և արհեստ չունեն», նրանցից 8-ը այդեպան են, 4-ը՝ թարգմանիչ, 3-ը հոգևորական, 1747 թ. 6 հոգևորական, 5 այդեպան, 4 ռատհաուզի ծառայող և 2 երաժիշտ։